

հին աւանդութեամբ այն ժամանակ նոյնը կարելի պիտի լինէր ըսել նաեւ երիցու և սարկաւազի համար աւ. զի սա եւս ձեռնադրութիւն ունէր միւսին պէս (Գրծ. 2, 6): Ամէն բան կարելի է ըսել, բայց ամէն բան չէ կարելի ապացուցանել:

Առաքելոց թղթերէն ոչ նուազ յարգի է մեզ անոնց կենդանի մէկ թղթոյն, Անոնց աշակերտին՝ Ս. Իգնատիոսի վկայութիւնը, որ ոչ միայն կը զատէ եպիսկոպոսը երէցներէն, այլ և ցուցնելու համար առաջնոյն գերազանցութիւնը, զայն կը համեմատէ Աստուծոյ հետ, և երիցունքն՝ առաքելոց. « Համարեցէք եպիսկոպոսը ձեր ժողովոց մէջ իբրեւ Աստուծոյ տեղը բռնող. երիցունքը՝ իբրեւ Առաքելոց մեծափառ ծերակոյտը կազմող. և սարկաւազները՝ զորս այնքան կը սիրեմ՝ իբրեւ պաշտօնեայք Քրիստոսի » (Թղթ. Մագնիս. 2): Կը ցուցնէ դարձեալ՝ թէ եպիսկոպոսութիւնն աստուածադիր աստիճան մ'է. « Ինչպէս Յիսուս Քրիստոս, մեր անբաժան կեանքը, հրամանաւ Հօր՝ կարգեցաւ բոլոր Եկեղեցւոյ վրայ, նոյնպէս եղան եպիսկոպոսներն Յիսուսի հրամանաւ՝ երկրիս զանազան մասանց մէջ » (սա Եփես. Գ): Սոյնպիսի վեկայութեամբ լի են Առաքելոց այս աշակերտին թղթերը, — չյիշելով քան զինք փոքր ինչ կրտսեր՝ Ս. Կղեմ. Աղեքսանդրացւոյ, Իրենէոսի, Տերտուղիանոսի և այլոց վկայութիւնքը, — որոնք այնքան յստակօրէն ցոյց կու տան՝ թէ նուիրապետական երբեակ աստիճանաւորութիւնն ստուգիւ առաքելական է: Եւ ես անգամ մ'ալ իրաւունք կ'ունենամ կրկնելու՝ թէ ասոր զոյութիւնը հայ և ընդհանուր եկեղեցւոյն մէջ նախնական է:

Հ. ՎԱՐԿԱՆ, ՀԱՅՈՒՆԻ



Մ Ի Ս Ա Յ Է Լ

ՀԱՅ-ԱՂԱՌԱՆԻՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԸ

Բոլոր անոնք որ նախնեաց գրուածներ հրատարակած են՝ չեն մոռցած յառաջաբանին մէջ յիշատակել թէ հիներէն հասած ամէն նշխար և նշմար՝ արժանի է մեր ուշադրութեան և յարգանքին: Սոյն զգացումը միայն պէտք է շարժառիթ համարել ներկայ գրուածիս հրատարակութեան, շատ աննշան մնացած, որ չունի կարեւորութիւնը՝ ոչ ժամանակագրի մը և ոչ բանաստեղծի մը: Այսու հանդերձ՝ որքան ալ իր ազդեցութեամբը տկար, այս ճառը կրնայ՝ իբրեւ վաւերաթուղթ մը, քանի մը գիծեր աւելցնել իր ժամանակի ոգւոյն վրայ, քանի մը տեղեկութիւններ մեր մատենագրութեան վրայ, և քանի մը բառեր մեր բանասիրանքուն մէջ:

Իժմախոսարար այս ճառէն մեր ձեռագրատան մէջ միայն մէկ օրինակ կայ, որով մէկ երկու խօսքերու մութ ընթերցումները անուղղելի կը մնան: Օրինակը կը գտնուի մեր Գ. ճառերնորին մէջ. զոր Մկրտիչ ոմն որդի Ղազարի գրած է « Ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, ի դուռն Սրբոյն Յակոբայ, ի Թուին Հայոց ՌծՁ » (1567): Կ'երեւի թէ առհասարակ շատ ծանօթ չէ եղած թէ՛ ճառս և թէ՛ հեղինակը, որուն անունն իսկ կը պակսի Վիեննայի Մխթարեան Հայոց գրչագիրներու ցուցակին մէջ: Մինչև հիմայ հեղինակին վրայ այնչափ տեղեկութիւն կար՝ որչափ որ կը պարունակէր իր ճառին վերնագիրը, որ հետեւեալն է. Երաւնայն Մխայիկի Հայոց եպիսկոպոսի, Մեծի Կողմանց և Քոստոքիսոսնայ նահանգին, ի սուրբ Խայն Քրիստոսի: Հ. Մ. Ագաբեան, որ Հայկազեանի համար գործածներ էր սոյն ճառը, գիտէ միայն՝ թէ է « Մխայիկի եպիսկոպոսի, յայնպստ դարու, ճառ գովելի ի սուրբ Խայն, վայե-

լուչ հայկարանութեամբ ¹ » : Միսայէլի վայելուչ հայկարանութեան վրայ յետոյ կը խօսինք , կարեւորն է իր ապրած դարը գտնել : Ազգերեանէ մինչեւ Հ. Գ. Զարբ-գրեթէ ոչինչ յաւելցուած է Միսայէլի վար-քին վրայ . « Միսայէլ եպիսկոպոս Աղուա-նից » իմաստաւոր կոչուած , որոյ անուամբ հասած է առ մեզ ներդրական ճառ մը ի սուրբ թաշն » : Ահա ինչ որ գիտէ Հայ-կական Հին Գարութեան Պատմութեան հե-ղինակը՝ Միսայէլի վրայ ² : Ինչ որ նոր կայ հոս՝ Արտանից իմաստաւոր յաւելուածն է , զոր առած կ'երեւի մեր ձեռագրաց ան-տիպ ցուցակէն , կազմուած Ազգերեանէ , ուր՝ Միսայէլ անուան դիմաց՝ Ալիշանի գրով գտայ աւելցուած « եպիսկոպոս Հոյոյ-Աղուանից , իմաստաւոր մականունեան » : Հ. Գարեգին Զարբ. զուրս թողած է Հոյոյ բառը՝ որ մեր պատմութեան ամբողջ շրջան մը կ'որոշէ , որուն վրայ քիչ մը վերջը համառօտութիւն պիտի խօսինք , ինչպէս որ կը պահանջէ Միսայէլի վարքը :

Ճառիս լեզուն և ականարկութիւնները այնքան տեղեկութիւնք կ'ընձեռեն , որով կարելի է գրութեան մէկ եզրը որոշել՝ ուսկից յառաջ չի կրնար գրուած ըլլալ : Եւ իրականէ , քանի որ մէջը կան ընդդի-մութիւն , պարագայութիւն , վերաբերեալ , վերա-ստեղծում , և այլն , և այլն , բառերը , ուրոնք հիւսնաքան դպրոցի ազդեցութեան տակ միայն կրնան կազմուած ըլլալ , չի կրնար մեծ հնութիւն մ'ունենալ : Հիւսն-նաքան գրականութիւնը ծանօթ է իրեն , ինչպէս կը ցուցնէ նաեւ այս կտորը .

Ոս (ինչպէս) լիբանոս արեւելեալ արմատովք և ուսովք յարեւելս . յառաջին անկիւն երկրի , ոչ մահա-սկիլքն պողաւ , այլ ինչ ընծայ՝ բարունակ խնկարքի . վկայք և օտարօրի ո՞նք յաջողս , գնաբաւ կոչելով՝ որ յարեւելեան կողմանէ , զոր ասէ թէ յաջ կողմ գնա-ցես ի տիւ արեգակնան , և թէ յահալ՝ յերկեւ կոչս ի խրթինն , և յարեւմտոս ի սահմանակալ կիսագոյն մտիցն արեւու : Վրան որոյ Հերակլ : Ի ծովանդն լեռ-կացեալ , որպէս ասեն , իշխալ՝ երեկորեայ առեւժ ա-նուանեցաւ , և ի հարաւայնն Պողոն՝ յանուկ բուրբակն

և յայրեցեալ գօտին՝ կազմ գօտեան , և յերկուսերն ծովու և դամբքի , և ի հիւսիսի՝ որ ընդ երկնից բար-ձրութեամբն և անուամբն աջոյ կողի , որ կողի գաւա-ցեալ և անձուկ , որ կանգնեցաւ նախ ի կիսարկա փպ-տէ , ի խրթան բուրբակի աշխարհիս :

Լեզուէն դատելով միայն՝ կրնայ նոյն իսկ Զ. դարու վերջերը գրուած կարծուիլ ճառս , բայց պատմական ականարկութիւնները քիչ մ'աւելի կ'որոշեն ժամանակը :

Մեր հին մատենագիրները ինչ ալ գրեն , միշտ կենսական եղած են , թէեւ միակող-մանի և տարտամ կերպով , այսինքն չեն կրնար կեանքը՝ զոր կ'ապրին , որ ճնշած է մանաւանդ իրենց վրայ : Հարստայայտել իրենց գրուածին մէջ ալ , ուր թէեւ ար-տակերպոն ըլլայ : Այսպէս Գ. դարու գրող-ները՝ միայն պատմագիրներ չեն , շատս գովելն են միանգամայն բրիտաննութեան՝ ընդդէմ հելանտութեան , և ուղղափառու-թեան՝ ընդդէմ հերձուածողներուն : Ե. դա-րու գրողները՝ նոյն ոգին կը ցուցնեն ա-ւելի լայն ծրագրով մը՝ ընդդէմ մագդէա-կանութեան որ կը սպառնար , և աղան-դասարներուն որ կը սողոսկէին : Նոյն ոգին կը շարունակուի և յաջորդ դարերուն մէջ , աւելի մեղմ կամ ուժգին շնչելով , ըստ ժամանակի պահանջին : Այս ջատագովա-կան շունչը այնքան աւելի սաստիկ պիտի ըլլար Խ. դարէն վերջ , որքան մահմէտա-կանութիւնը , հեռու՝ հեթանոսութեան կամ մագդէականութեան պէս զառամած ըլլա-լէ , հերետիկոսութեանց պէս ընդհանրապէս քաղաքական զօրութենէ զուրկ , և բրիտա-նէութենէ իսկ , թէեւ խեղաթիւրած՝ շատ աւանդութիւններ առած ըլլալով , վախ կու տար տարածուելու այնչափ՝ որչափ որ թարմ ու անաղ էր իր զօրութիւնը , և տի-րելու ոչ միայն մարմնոյն վրայ անոնց՝ զորս իր օրէնքներուն տակ կ'ընդծէր , այլ և սրտին՝ նուիրական ընկելով հեշտութիւն-ները իր գերագոյն երջանկութեան կազմած տեսլականով : Եւ նոյն դարէն սկսեալ՝ մա-մանականագիրները , վկայաբանութիւնները՝

1. Հայկ. Հա. Ա. էջ 15 :

2. Հմմտ. Պոս. Հայկ. հին դար. էջ 758 :

ինչպէս վահան Գողթնացւոյն, չեն մոռնար, նախատական խօսքով մը, զգացնել ժողովրդեան անոր զգուելի կողմերը: Ղեւոնդ պատմիչ, մասնաւորապէս, կարգաւորեալ հերքում մը գրած է ընդդէմ մահ-մէտականութեան և ջատագովութիւն մը քրիստոնէութեան՝ ընդդէմ անոնց քննադատութեանց, որ իր պատմութեան 45—98 էջերը կը գրուէ՝ Միսայէլն ալ՝ իր ճառին մէջ պէտք զգացեր է նիւթէն զարտուղիլ մարգարէին վարդապետութիւնը քննադատելու համար: «Արդ զայս զարշիլի ազնատանս՝ Պարսից և Արարացոց մանկանցն թողցուք յուսոյ. զի ուրախ լիցին անկերպարան առասպելօքն. զի մեծ ոմն նոցա հաստատեաց զայս ի հակառակելն ընդ մեզ, ի ժամանակի յորում թագաւորական իժն նոցա հերձաւ ի ծննդենէ... զի մեզ ոչ թուշունք ի վերուստ կերակրելոյն կերակրելով, և անդէն բարձրանալով՝ լիութեամբ յօղուածոց և տարերցն, և ոչ պտղոց բազմագունաց և համադասաց՝ ի կամս ընտրութեան և վայելք անապականութեան, և ոչ կերակրող յորինուածք՝ որակութեամբ հակառակեալը ընդ միմեանս, որովք կերակրեցաւ, ի խօթանալն՝ ասեմ, իւրեանց հրապուրողն... Եւ ոչ կուսանաց գեղեցկաց թափանցանց բայց սոքա վատթարագոյն քան զանբանսն երեւին, զաստ մոլորութիւն ի կանայս՝ անդ դնեն նախատիպ պատկերի... »: Այս ճառը ուրեմն առ նուագն է. դարու վերջերէն յառաջ չենք կրնար դնել, որովհետեւ Արարացիք թէև 636ին կը սկսին

իրենց արշաւանքները մեր երկիրը՝ բայց 661 տարեթիւէն յառաջ չեն յաջողիր զանիկայ վերջնականապէս նուանել և իրենց լայնածաւալ պետութեան հարկատու մարդ մը ձեւացնել:

Գրուածքին այս ներքին վկայութիւններէն դուրս՝ քանի մը արտաքին տեղեկութիւններ և կու գան ցուցնելու մեզի ճիշդ ժամանակը՝ յորում ապրած է Միսայէլ, և տեղեկութիւններ տալու իր անձին վրայ:

Ճառիս խորագրին մէջ կ'ըսուէր. «Միսայէլի Հայոց եպիսկոպոսի, Մեծի-կողմանցն և Գուստիփառնայ նահանգին» : Զեռագիրներու մէջ պիտի հանդիպինք երբեք Ներսիսի Լամբրոնացւոյ Հայոց եպիսկոպոսի ... վերնագրի մը. ոչ՝ ամէն մարդ գիտէ այդէն թէ նա հայ է: Իսկ Միսայէլի անուան կցուած՝ այս բացատրութիւնը, որ դիտումնաւոր է, թէ՛ ընտանութեան է նշան և թէ՛ օտարութեան. և իրացնէ Միսայէլ հայ ըլլալով հանդերձ՝ եպիսկոպոս էր թեմի մը, որուն հաւասարապէս հայ բնակիչները՝ ազգէն անջատուած, զգացումներով և հպատակութեամբ Աղուանից մասն կը կազմէին: Ասոր համար Ալիշան, որու խօսքը վերը յիշեցինք, նշանակած է Միսայէլի համար՝ Հայոց-Աղուանից եպիսկոպոս:

Իր թեմին աշխարհագրական դիրքը աւելի կ'որոշէ այս կէտը: Մեր մատենագրութեան մէջ շատ ցանցառ յերեւան կու գան Մեծ-կողմանք և Գուստիփառնէս նահանգները, և այն՝ Հայոց կեանքի հետ քիչ աղբրս ունենալով: Նահանգ յորը՞որը մը

1. Ըստ հրատարակութեան Կ. Եղեանցի: Այն ջատագովութիւնը, որ ամբողջ ԺԻ գլուխը կը բռնէ, իբր պատասխան մըն է Օմար ամիրապետի (717—720) մէկ նամակին, զոր հաւասարապէս Ղեւոնդ պահած է իր ԺԳ. զլիւռն մէջ, գրուած Լեւոն խաւարացիին կողմանէ (717—741): Ըստ այսմ՝ Ղեւոնդի պատմութեանս այս ամբողջ հետաքրքրական կտորը՝ թարգմանութիւն կրնայ նկատուիլ յունարենէ, եթէ այս թուղթը իր կողմանէ յիշերածնէ: Թեոփանէս և Կերբենոս կը յիշատակեն թէ Օմար թղթակցած ըլլալ Լեւոնի հետ, զայն ժահմատական դարձնելու: Ղեւոնդէ առնելով՝ կը յիշատակեն այս բանն նաեւ թուղթ Արեւունի, վարդան, Կի-

րակոս: Պատկերամարտ կայսրը՝ որ այնքան մոլեգնութեամբ կը մանակցէր կրօնական խնդիրներու, անշուշտ լուրջութիւն պահած պիտի ըլլայ ներկայ դպրութեան մէջ, որ կանխած է քան իր մոլորութիւնը (սեպտ. 717—718): Բայց թէ Ղեւոնդի քով եղածն վաւերապէս է: Պ. Մլը կը տարակուսի ասոր ստուգութեան վրայ. (Հմմտ. Յաւայթ. Կ. Շահապարեանցի հրատ. էջ 17): Կ. Եղեանց վաւերական կը համարի, և ըստ այսմ՝ յունարենէ թարգմանած (Հմմտ. իր Ղեւոնդի հրատարակութիւնը, էջ 183): Փափաքելի է խոր քննութեամբ մը երկու կարծիքներն մէկը ապացուցանել:

որ տրուած է ասոնց ճառիս խորագրին մէջ՝ սխալ մը պէտք է նկատել, քանի որ երկուքն ալ միայն գաւառներ են Արցախ նահանգին, ինչպէս կը գրէ Խորենացոյ առնուամբ հասած աշխարհագրութիւնը. «Արցախ յերի կայ Սիննաք. գաւառք են ի նմա երկուտասան, զոր Աղուաք ունին. Միւս Հաբանդ, Վակունիք, Բերդաձոր, Մեծկուսք, Մեծիրանք, Հարճլանք, Մուխանք, Պիւնք, Պանծկանք, Սիւսական ուտան, Գուստիփառնէս¹, Կոխթ՝ յորում լինի քարախունկ » : Մակար եպիսկոպոս Բարխուտարեանց՝ Գուստիփառնէս անունը երկուքի բաժնիք է՝ Գուստի և Փաւսէս, որոնց դիրքը այսպէս կ'որոշէ իր Արցախ նահանգին վրայ հանած գրքին մէջ. « Գաւառն որ ընկած է Շամբոր գետակի միջին օժանդակի և Գեղամայ լեռնաշղթայի գաւթինագծի շարունակութեան և Տաւուշ գետակի հարաւ-արեւելեան օժանդակի (Ախոնջի) ափերի և դաշտաբերանի մէջ, ստացած է Փառնէս, Փառիս, Փառիսոս, այժմ Շամշատին անունները » :

« Գաւառն, որ ընկած է Տաւուշ կամ Թովուզ գետակի հարաւային (Ախոնջի) օժանդակի, Աղստե գետի և Գեղաման լեռնաշղթայի և դաշտաբերանի մէջ, ստացած է Գուստի, Գաւս, այժմ Դաւախ՝ առնունները, (Մեծ մասն Շամշադին) » :

Նոյն հեղինակն այսպէս որոշած է նաեւ Մեծ-Աղովանք երկրին դիրքը. « Գաւառն, որ ընկած է Մուս բարձր լեռնաշղթայի դաշտաբերանի, Թրդի և Թաթաւ շրերի ձախ և Կուրակ գետակի աջ ափերի մէջ, ստացած է Մեծ-Կուրուք, Մեծ Կուանք, Չարաբերդ, Թայիշ, Կիւլիստան, Զրաբերդ, այժմ Զուանշիր՝ անունները » :

Իսկ Արցախ նահանգը յորում կը գտնուէին Միսայէլի այս թեմերը, բուն հայ հող չէր, թէեւ մեր բոլոր աշխարհագիր-

ները՝ զայն քիչ մը իրրել այսպէս կը նկատեն. Նա բուն Աղուանից կը պատկանէր, յետոյ մեր երկրին հետ միացուելով՝ Արշակ Թագաւորին յանկումն, կ'անջատուի հայ նահանգներէն՝ որպէս զի Մուշոյ դարձեալ զինք նուաճէ Պապի ձեռքին տակ : Բայց 387ին վերստին Աղուանից կ'անցնի, որուն մասն կը նկատուի այլ եւս ընդ միշտ² :

Առհասարակ թէեւ բոլոր Աղուանք, իրեն արուարձանեայ երկիր, քրիստոնէութենէ վերջ Հայոց կրօնակից և դաշնակից ըլլալով՝ սերտ յարաբերութեան մէջ էին մեզ հետ, բայց հայկական ազդեցութիւնն ու ազգութիւնը աւելի զգալի էր Ուտի և մանաւանդ Արցախ նահանգներուն մէջ : Մաս մը բնիկները հայացնելով, մաս մը հայ հողերէն հոն գաղթելով այլ և այլ արշաւանաց ժամանակ, մանաւանդ վարդանանց պատերազմէն վերջ, խիտ հայ հասարակութիւն մը կազմուած էր : Ասոնք՝ պահելով հանդերձ իրենց լեզուն, հանգամանքներու բերմամբ՝ Աղուան ժողովրդեան մասն կը կազմեն իրենց ընկերական միւս բոլոր յարաբերութիւններով, ունենալով իրենց առանձին եպիսկոպոսը, զոր Աղուանից հայրապետը կը ձեռնադրէր :

Այսպիսի մէկն էր և Միսայէլ, ճառիս հեղինակը, որուն վրայ Մովսէս Կաղանկատուացոյ գրքին մէջ, - այս իսկ հայապետան մը, - հետեւեալ տեղեկութիւնները կը տրուին.

Ի ժամանակ խոսութեանն որ շարժեցաւ ի մէջ Եսայիայ որդւոյ Հեթայ, և իւրոյ գործակալին Մանէտի՝ որդւոյ Աղզմեհդի, որ կոչուր Եմեմիկ, զօրաժողով լինի որդեկ Հեթայի ի կողմանց Ասորեստանաց, մեղաւորութեամբ Աւտի իշխանի. զի և սա զուարթ զգոյն Հայոց հանդերձ իշխանօքն Աղվանից, երթան, հարկանէ զհակիրէ ի դրանն Պարտաւայ, և քաջամուր կաշին ի մարտի զամս 13⁴ : Ընդ այն աւուրս հասանի վախճան հայրապետին Աղվանից Գովսեփայ, և ոչ լի.

1. Երկու՝ օր. և չին տպ. երկուքի կը թաժեն այս անունը, Գուստի և Փառնէս գրելով :

2. Հմմտ. Արցախ, տպ. Բագու, 1895, էջ 24-25 :

3. Հմմտ. Հիւբլան, Die Altarmenische Ortsnamen, տպ. Սարգսուրդ, Փարս. Թիւրքմէն, 1904, էջ 266 :

4. Հ. Արեշան՝ Ա. Աւտի վարքին մէջ յիշելով այս գէպը (Հմմտ. Գուշիկը, հտ. Ա. էջ 472) փոխանակ 13 տարի դնելու, ինչպէս, կը հոս, կը գնէ 13 ամիս, որ հիշքն է : Զեռագրաց մէջ ամս և ամիս գիրաւ կըրնան չփոխութեան առիթ տալ :

ներ պարսպ իշխանացն Աղվանից՝ նորոգել զաթոռ հայրապետութեան Աղվանից։ Իսկ Մեծ կողմանց եպիսկոպոսն Սամուէլ՝ անձնականակ ընդ Մխայիշի քահանայի, որ իմաստասերն կոչիր, խորհրդազգած եղեալ առանց զխառնագունին աղոյ, տայ զեպիսկոպոսութիւն իւր Միտայէի։ Եւ ինչն Սամուէլ զանկատարն առնու ձեռնագրութիւն յիւրմէ եպիսկոպոսէն։ Լուսապս եհաս ի բանակն. և բազում եղեւ խռովութիւն իշխանացն Աղվանից։ Յայն(ժամ) միարանութեամբ զեկոյցանին զայս Տեառն Գեորգայ՝ Հայոց կաթողիկոսի. և նորա կանոնական սահմանագրութեամբ զբեալ առ իշխանն Հայոց՝ մաղթէ օգնել իրացն զաւարտն առնել խաղաղութեամբ։ Եւ նորա իմաստաբար ասեալ ի հաւան զպետն և զիշխանսն Աղվանից՝ խաղաղութիւն ի մէջ նոցա առնէր, այլ նոցա զնոզու պատահաւալ։ Իսկ Աշոտ՝ իշխանն Հայոց, ինդրէր զգարագրութիւն սբգոյն Գրիգորի և զձեռնագրութիւն առնու ի Հայոց. որք առ ժամն հաւանեալ Սամուէլի և Մխայէի պղծատորման, զոր մեծ իշխանն Հայոց զբէ առ հայրապետն Գեորգ, և զՍամուէլն հաճեցուցանէր ամենայնիւ Աղվանից կամուկցութեամբ։ Յանկամայական մտոց չուեալ երկայ ի Գլին՝ և զերկրորդն առնու ձեռնագրութիւն աննահաւան Սամուէլ ի Գեորգայ՝ Հայոց կաթողիկոսէ, յաւառար Աշոտի՝ Հայոց իշխանի. և թուականութիւն Հայոց լինել 326⁴։

Տեղ մը չի յիշատակուի թէ այս կտորիս մէջ յիշուած Մխայէի քահանայն՝ որ իմաստասերն կոչիր՝ նոյն անձն ըլլալ ճառիս հեղինակին հետ, բայց նկատի առնելով այն բոլոր հանգամանքները՝ արտաքին և ներքին՝ զոր ցարդ ջօշափեցինք՝ անկարելի է տարակուսիլ որ այս երկու անձնաւորութիւնները նոյն չըլլան։ Եւ որովհետեւ վերը բերուած կտորին մէջ որոշ դէմքեր ու տարեթիւեր նշանակուած են՝ կրընանք Մխայէի համար, որ Ագեբեանի, Հ. Գ. Զարբհանալիանի ժամանակ դեռ տարտամ ու անյայտ մէկն էր, հետեւեալ կենսագրութիւնը կազմել, որ կրնայ գոհացուցիչ ըլլալ անձի մը նկատմամբ՝ ուսկից դեռ միակ ճառ մը ծանօթ է։

Մխայէլ այն հայ-աղուաններէն էր՝ որոնք Աբգաի նահանգին մէջ կը բնակէին։ Թնած է մերձ 840 թուականին։ Ոչ միայն ուսմանց հետամուտ՝ այլ և իր դարուն ու միջավայրին մէջ յաջող ու փայլուն է եւ

դաժ, այնպէս որ յետոյ կրցաւ իմաստասեր տիտղոսը ժառանգել։ Քահանայ ձեռնադրուած է 876էն բաւական յառաջ. Մեծի-կողմանց և Գիւստի ու Փառնէս, — այս երկիրը ծննդավայրն եղաւ յետոյ նաեւ Յովհաննէս Սարկաւազ Սոփեանտէսին, — զաւաններուն եպիսկոպոսէն՝ Սամուէլէն, որուն մտերիմ բարեկամն եղաւ։ Դէպքերը այնպէս բերին՝ որ ինք շատ կանուխ նաեւ եպիսկոպոսական աստիճանին բարձրանայ։

Յիւսէ կողմնակալը, զոր Կաղանկատուացի Եսայի կը գրէ, Հայաստանի մէջ խնդիրները խաղաղելէն վերջ, Ուտի նահանգը կ'անցնի, որ Աբգաիի նման՝ հաւասարապէս հայ-աղուան էր. ուր ժամանակ մը դադարելէ վերջ, անոր Պարտաւ մայրաքաղաքին մէջ իրեն գործակալ կը թողու Մահմէտ որդի Ապղմհնդի, ինչպէս կը գրէ պատմիչս, կամ Ապլվիտայ, ինչպէս կը գրեն ուրիշներ, որ սովորաբար Եմմիկ կամ Համամիկ կը կոչուի, Թերեւս Եմմէն ըլլալուն համար։ Ասիկայ Յիսէի հեռանալէն վերջ, տեղացի իշխաններուն հետ միացած՝ 875ին կ'ապստամբի, և Պարտաւի մէջ կ'ամրանայ։ Յիսէ ձայն կու տայ մեր իշխանապետին, որ Մեծն Աշոտ էր, և երկուքն ի միասին կ'երթան մայրաքաղաքը կը պաշարեն։ Պատերազմն ու խռովութիւնը կը սկսի։

Այս շփոթութեան օրերուն՝ Աղուանից Յովսէփ կաթողիկոսը մեռնելով, աթոռը պարսպ կը մնայ։ Մխայէի մտերիմ եպիսկոպոսն՝ Սամուէլ, յուսով պղտոր ջրի մէջ լաւ որս մը կարթելու, իր աթոռը Մխայէի ժառանգութիւն կը թողու. զանիկայ Մեծ կողմանց ու Գիւստիի առնէս զաւառներուն թեմական ձեռնադրելով « առանց զխաւերագունին աղոյ »։ Իսկ ինքը՝ Սամուէլ « զանկատարն առնու ձեռնագրութիւն յիւրմէ եպիսկոպոսէն », այսինքն՝ Մխայէի ալ՝ իբրեւ ի փոխարէն, զասիկայ Աղուանից իշխրապետ կ'օծէ, որ անկատար կը նկատուի։ Այս անկատարին պատճառը՝ կ'արժէ քիչ մ'երկայն բացատրել, ոչ միայն իրերը լաւ հասկանալու համար, այլ որովհետեւ ազգային թէ՛ քաղաքական և թէ՛

1. Մովս. Կաղանկ. Կտ. Բ. գլ. ԽԱ. էջ 61-63, տպ. Կ. Վ. Շահնազարեան, Փարիզ, 1860։

եկեղեցական պատմութեան մէջ ալ կարելոք կէտ մըն է:

Երբ հայ եկեղեցին՝ Քաղկեդոնի ժողովքը չընդունելով, ընդհանուր եկեղեցիէն բաժնուեցաւ¹, իրեն աւելի հեղինակութիւն մը տալու համար, նայեցաւ որ ձեռք բերէ այն նուիրապետական կազմակերպութիւնը՝ զոր ունէին միւս մեծ ու բուն պատրիարքական աթոռները, Երուսաղէմին, Անտիոքին, Հռոմին ու Ալեքսանդրիային, յետոյ նաեւ Կոստանդնուպոլսին: Ըստ այսմ՝ Հայոց պատրիարքարարիւր իրեն գերիշխանութեան տակն ունեցաւ Վրաց մետրապոլիտները և Աղուանից արքեպիսկոպոսոսթիոնը²: Այս բանաւայնքան աւելի դիւրին եղաւ, որքան որ միւս երկու ազգերը, մեզմէ աւելի փոքրաթիւ, դարերէ ի վեր հասարակաց շահերով միացեր էին մեր բախտին հետ, մեզմէ ընդունէր էին քրիստոնէութիւնը, մեզմէ լուսաւորուէր էին գիրով ու գրականութեամբ, մեր ազգաբնակչութեամբ խառն ու խիտ հասարակութիւններ ունէին:

Բայց հանգամանքները միշտ նոյնը չը մնացին: Ինչպէս երկիրը քաղաքականապէս երկուցրի բաժնուած էր, պարսկական և յունական, եկեղեցին ալ ի հարկէ այսօր չէ վաղը նոյն անջրպետներով պիտի երկփեղկէր: Միայն թէ հոս գէնքերու տեղ՝ մտերեն են որ իրարու հետ կը բաղխին: Պէտք էին հիմնալ այս երկու բանակներուն վրայ ալ, որոնք այնքան նախանձալուզութեամբ զիրար կը բանաղրեն, եթէ իրացնէ տարբեր գաղափարներու անձնագոհներն ըլլային: Բայց իրօք նոյնը դաւանելով, տգիտութեամբ ու փառասիրութեամբ, և զիրենք արդարացնելու համար ըսենք նաեւ՝ ցեղական և միջավայրական նկարագրի տարբերութեամբ, բայց և թաւայ համար, ինչպէս կը դիտէ Լամբրոնացի, դարերով կը յուզուի ամբողջ ազգն ու Ա-

րեւելքը, պատրաստելու համար անկումը ժողովուրդներու բարօրութեան, զօրութեան, Արեւելքի կայսերութեանն ու քաղաքակրթութեան:

Կղերին ու ժողովուրդեան մէջ շուտով կը կազմուին կուսակցութիւններ՝ որոնցմէ մէկը Քաղկեդոնի ժողովքը կը սրբացնէ, միւսը կը դատապարտէ: Վէճը հոն կը հասնի, որ Մօրիկ կայսրը յունական բաժնին Հայոց համար Յովհաննէս անուամբ հայ մը կաթողիկոս կը դնէ (580-590). պարսկական բաժնին վրայ կաթողիկոս կը մնայ Մովսէս: Յովհաննէս մահուամբ՝ կաթողիկոսութիւնը վերստին կը միանայ Աբրահամի ձեռքին մէջ, բայց ոչ նաեւ ժողովրդեան իրարմէ ուժացած սրտերն ու հետեւանքները: Նախ Սիւնեաց եպիսկոպոսութիւնը՝ որ Հայաստանի նշանաւոր աթոռ մըն էր, երկու կաթողիկոսներէն ոչ մէկուն չեն դիմեր. իրենց Պետրոս եպիսկոպոսին խորհրդով կը սկսին այնուհետեւ Աղուանից եկեղեցիէն առնել ձեռնադրութիւնը: Իսկ Վրացիք՝ իրենց Կիրիլոն մետրապոլիտին հետ, Քաղկեդոնի ժողովն ընդունելով, կ'եննեն հայ եկեղեցւոյ գերիշխանութեան տակէն: Ասոնք՝ այլ եւս Հայոց նախանձորդ, կը ջանան իրենց գերիշխանութեան տակ ձգել Աղուանից արքեպիսկոպոսութիւնը: Բայց Աղուանք՝ հակառակ յոյն զօրավարաց պառնալիքներուն, կը մերժեն Վրացիները, իբրեւ մուրհաւներ. կը մերժեն նաեւ Հայերը, այլ եւս անարժան համարելով անոնց երկրորդն ըլլալ, և անկախ եկեղեցի մը կը կազմեն, յանուն իրենց նորաստեղծ Առաքեալին՝ Եղիշէի, որ իբր թէ Թաղէոսի աշակերտն եղած ըլլայ, և Աղուանից եկեղեցւոյն վրայ եպիսկոպոսական ձեռնադրութիւնը Յակոբոս Առաքեալէն առած ըլլայ՝ Երուսաղէս մի մէջ³: Եւ որովհետեւ հին ատեն իրօնքն էր որ ազգութիւնը կ'որոշէր, հայկական

1. Այս բաժանման պատճառաւ սկիզբն տուած կը համարուի (Թերեւս լեւելայն) Բարզէն կաթողիկոսը, որ, ըստ Յովհաննէս կաթողիկոս պատմագրի տեղեկատուութեան, 491ին Վրաց ու Աղուանից եկեղեցական

իշխանութեանց հետ, վաղաքապատ ժողով մը գումարելով, Զենոն կայսեր հանած ձեռնորոշումը կ'ըզգունէ:

2. Հմմտ. Մովս. Կաղանկատ. հտ. Ա. էջ 410:

3. Հմմտ. Մովս. Կաղանկատ. հտ. Ա. էջ 410-411:

այն գաւառները՝ որ վրաց ու Աղուանից հետ էին, պահելով հանդերձ իրենց լեզուն, վրացի և Աղուան կը նկատուէին:

Սամուէլի այս դէպքը պատճառն եղաւ, որով Աղուանը վերստին հայ եկեղեցւոյ գերիշխանութիւնը ճանչցան: Որովհետեւ նոյն իսկ հայ-աղուան իշխանները՝ որ Աշոտի հետ Պարտաւը պաշարած բանակիւր էին, այս ինքնընտրութեան դէմ բողոքեցին մեր Գէորգ Բ. կաթողիկոսին (876-897): Գէորգ Աշոտի կը գրէ՝ որ գործը իսկապէս թեմայի անհարմար անարտէս: Իմաստունն Աշոտ կը համոզէ աղուան իշխանները՝ որ առժամայն հաւանին Սամուէլի և Միսայէլի ըրածներուն, և թէ իրենց հայրապետը ձեռնադրութիւնը Հայոցմէ առնու. Գէորգ կաթողիկոսին ալ կը գրէ այս բանս: Անձնահաճ Սամուէլ թէեւ ակամայ, բայց ստիպուած բոլոր Աղուանից կամակցութենէն, կը զիջանի երթալ Գուգին և հոն, ըստ պատմչին բացատրութեան՝ « զերկրորդն առնու ձեռնադրութիւն » (877):

Այսպէս ուրեմն Միսայէլն ալ կը հաստատուի իր թեմին մէջ, հաւանութեամբ Գէորգ կաթողիկոսին, իբրեւ եպիսկոպոս հայ-աղուանից: Իր այս հովուական պաշտօնին մէջն է՝ որ անիկայ ցոյց տուած պիտի ըլլայ իր իմաստասէրի միտքը. գրելով թերեւս շատ ճառեր՝ որոնցմէ սակայն առժամա միայն հատ մը առձեռն ունինք. թերեւս ասիկայ շարժառիթ մ'ըլլայ ուրիշ անանուն հեղինակութիւններ կամ թարգմանութիւններ ալ իրեն սեփականելու:

Խաչի վրայ գրած այս ճառէն դատելով՝ բաւական ու բազմակողմանի հմտութեամբ կըրթուած միտք մը կ'երեւի Միսայէլ եպիսկոպոս: Լեզուի մասին՝ աւելի նորութիւններ յուսալի էր գտնել իր քով, քանի որ բնակիչ էր գաւառի մը՝ որ զուտ հայկական չէր: Բայց ինք՝ իբրեւ գրեցրու մարդ շատ բան կարդացեր է. իր լեզուն՝ ոչ իր գաւառին է և ոչ իր ժամանակին. նախորդ դարերու և դպրոցներու ուսանող մըն է, որ յաջողած է սահուն ու սովորական կերպով մը գրելու:

Հ. Ն. ԱՆՏՐԻԿԱՆ

ՆՈՐ ՈՒՂԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑՈՒ

ՍՈՍԱԼ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐԻ

Փարպեցու վերջին տպագրութիւնը, որ կատարուել է աշխատութեամբ Գալուստ Տէր-Միկայիլանի և Ստեփան Մայիսեանի (Տփլիս, 1904), որքան էլ խնամուած լինի և ամենից կատարեալը, այնու ամենայնիւ ներկայացնում է մէկից աւել ընթերցումներ, որ չեն բաւականացնում տրամաբանական պահանջներին, և հէնց այս պատճառաւ զգացնել են տալիս նորանոր ուղղագրութիւններ կարիքը:

Փարպեցու բնագրաքննական հարցով զբաղվել են բազմաթիւ գիտնականներ. բաց ի հրատարակիչներից, նաեւ Նորայր Բազումեյանի (Հայկական բառարանութիւն, Կոստանդնուպոլիս, 1880) Ստ. Մայիսեան (Ողորտիւններ Ղ. Փարպեցու պատմութեան և թղթի, Հանդէս Հայագիտութեան, 1903, Բ. հտ. Բ. տետր.) Ստեփան Վ. Պալանտ (Բաւոստի հանդիսում), Գեորգ Զ. Թադեւոս Վ. Թադեւոս, Թագադիր Աբրայ (Բազմաթիւ, 1905, դեկտ. տետ. և հոկտ. 1904):

Սրանց վրայ պէտք է աւելացնել Հ. Բ. Ստեփանի « Երկու խօսք Ղ. Փարպեցու նոր տպագրութեան առթիւ » (Բազմաթիւ, 1905, էջ 52), որ մի խղճահար համեմատութիւն է Ս. Ղազարու ձեռագիրներին և նորագոյն տպագրութեան:

Գնահատելի է սրանցից մատուցուած ծառայութիւնը. բայց հայ գրականութիւնը այն արտերիցն է՝ որ որքան էլ մշակվեն՝ կարող են նորանոր հունձքեր արտադրել:

Այստեղ՝ Հայկական Ճեմարանի ուշագրութեանն եմ առաջարկում իմ մի քանի ուղղագրութիւններին՝ կատարված վերջին տպագրութեան վերայ (Տփլիս, 1904):